Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») ձգտում է նվազագույնի հասցնել իր գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցությունները կենսաբազմազանության վրա: Սույն Քաղաքականությունը սահմանում է Ընկերության բոլոր գործողությունները, որոնք կարող են ազդել կենսաբազմազանության վրա, ներառյալ՝ հողօգտագործման պլանավորումը, բնապահպանական կառավարումը, թափոնների հեռացումը, ջրային ռեսուրսների կառավարումը, վերականգնումը և հանքի փակման պլանավորումը: Քաղաքականությունը միաժամանակ վերաբերում է համայնքների և շահագրգիռ կողմերի հետ Ընկերության փոխգործակցությանը, ինչպես նաև մեր գործունեության սահմաններից դուրս կենսաբազմազանության պահպանմանը նպաստելու Ընկերության ջանքերին: Ակնկալվում է, որ Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերն ու կապալառու կազմակերպությունները, գործընկերները պետք է նպաստեն սույն Քաղաքականության իրականացմանը:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ակտիվ առաջնորդության միջոցով խրախուսում է աշխատանքի կայուն մեթոդներ կազմակերպության բոլոր մակարդակներում և այն համայնքներում, որտեղ գործունեություն է ծավալում: Նշյալ մեթոդները նպաստում են Ընկերության գործունեության տարածքում և դրանից դուրս կենսաբազմազանության պահպանմանն ու բարելավմանը:
- դրական ազդեցություն է ունենում Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերական ոլորտում կենսաբազմազանության կառավարման և դրա մասին իրազեկման վրա:
- ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը (և ակտիվ աշխատում է նույնը մեր գործընկերների մասով ապահովելու հարցում) կիրառելի ՀՀ և միջազգային օրենսդրությանը, ներառյալ ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի սկզբունքներին, Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կատարողական ստանդարտներին, Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) սկզբունքներին (ավելի կոնկրետ 7-րդ սկզբունքին՝ Կենսաբազմազանության պահպանություն) և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների 15-րդ սկզբունքին:
- բացահայտում, գնահատում և կառավարում է կենսաբազմազանության հետ կապված ռիսկերը գնահատման հուսալի գործընթացի միջոցով՝ կենսաբազմազանության վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:
- շարունակաբար կատարելագործում է Ընկերության բնապահպանական կառավարման համակարգերը' կենսաբազմազանության վրա ազդեցության կառավարման մեթոդների ինտեգրումը կազմակերպության բոլոր ստորաբաժանումներում ապահովելու համար:
- մշակում և իրականացնում է հանքի աստիճանական վերականգնման ծրագրեր' փակման և վերականգնման ավելի լայն ծրագրի շրջանակներում, որոնք նպաստում են հանքի շահագործման ողջ ընթացքում հողերի աստիճանական վերականգնմանը:
- ապահովում է ուսուցում՝ բոլոր աշխատակիցներին ու համապատասխան կապալառուներին կենսաբազմազանությանն առնչվող իրենց պարտականությունների վերաբերյալ տեղեկացնելու և դրանց իրականացման համար իրավասություններ տրամադրելու նպատակով:
- տրամադրում է անհրաժեշտ միջոցներ սույն Քաղաքականության իրականացման համար:
- աշխատում է գործընկերների (արդյունաբերական ձեռնարկություններ, գիտական շրջանակներ, հասարակական կազմակերպություններ, պետական և տեղական իրավասու մարմիններ և այլն) հետ կենսաբազմազանության պահպանությունը ակտիվորեն խթանելու համար՝ նպաստելով դրա բարելավմանն ուղղված տեղական, տարածաշրջանային և գլոբալ ջանքերին:
- Ընկերության գործունեության բոլոր ուղղություններով թափանցիկ և պրոակտիվ կերպով համագործակցում է համապատասխան շահագրգիռ բոլոր կողմերի հետ կենսաբազմազանության վրա ազդեցության, ինչպես նաև վերջինիս բարելավման ռազմավարությունների շրջանակներում:
- իրականացնում է Ընկերության՝ կենսաբազմազանության կատարողականի մոնիտորինգ և այդ մասին պարբերաբար զեկուցում բոլոր շահագրգիռ կողմերին:
- պարբերաբար վերանայում և թարմացնում է կենսաբազմազանության հետ կապված նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողականի տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:
- պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում դրանց բարելավման ուղղությունները:

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

Հրապարակման ամսաթիվը 25.12.2024թ.